

երբ Արաբիոյ մոգերը հասան, հոն գտան Մանուկը»։ Որոգինէս արգէն 215 ին ճամբորդած էր Պաղեստին և անտարակոյս տեսած էր Քրիստոսի Ս. Ծննդեան այրը։ Իսկ 248 ին իրեն հակառակորդ Կելսոսի կը գրէ հետևեալը. «Քրիստոսի Բեթղեհէմի մէջ ծնած ըլլալու մասին, Միքիայի մարգարէութենէն, Յիսուսի աշակերտներու կողմէ պատմուած Աւետարանէն յետոյ, եթէ մէկը ուրիշ ապացոյցներ ալ ուզէ, թող գիտնայ թէ անոր Ծննդեան նկատմամբ Աւետարանի մէջ պատմուածին նման, Բեթղեհէմի մէջ ցոյց պիտի տրուի այն Այրը, որուն մէջ Ան ծնած է, և անոր մէջ այն Մսուրը, ուր խանձարրապատեցաւ։ Եւ ինչ որ ցոյց կը տրուի՝ ծանօթ է ամէնուն, նոյն իսկ հեթանոսներուն, այսինքն քրիստոնեաներու կողմէ երկրպագեալ և հիացեալ Յիսուսը ծնած է այս Այրին մէջ»։

Քրիստոսի ծննդեան այրը սակայն, Բ. դարու առաջին քառորդին, յայտնի վկայութեամբ մը, փոփոխութիւն մը կրած է առանց ջնջելու Քրիստոսի ծնընդեան աւետարանական պատմութեան եւ անոր հիասքանչ դէպքերու յիշատակները։ Բեթղեհէմի Ս. Ծըննդեան Այրին մէջ Ագրիանոս հաստատեց Ադոնիսի կամ Թամմուզի կուռքը(*), Այրին չորս կողմը վերածելով մայրաստանի մը։ Այս մասին Կիւրեղ Երուսաղէմացին իր «Կոչումն ընծայութեան» գիրքին մէջ (Ճառ ԺԲ.) Բեթղեհէմի այրին վրայ խօսած ժամանակ, 347 ին յայտնապէս կը գրէ ըսելով. «Զի յառաջ

(*) Քրիստոնէութենէ առաջ ալ Թամմուզ կամ Ադոնիս կը պաշտուէր Սիրիոյ եւ Պաղեստինի մէջ, ինչպէս կը վկայէ Ս. Գիրքը. «Եւ եմոյժ զիս առաջի գրան սանն Տեառն, որ հայէր քնդ հիւսիսի, եւ ահա նստէին անդ կանայք եւ ողբային զԹամմուզ» (Յգեկ. Ը. 14-15)։